

Բայց ազոնց մէջ կարեւորագոյնն է անշուշտ առաջինը, յորում մեր կը տեսնենք նոյն ինքն մեր մատաղը: Յայտնապէս զոն (sacrifice) է այն՝ ըստ Թարգմանչի գործածած բառին: Անոր միան առողջութիւն է հիւանդաց, ինչպէս հայ զոհերունը. եւ ճարպը հաճելի նուէր Աստուծոյ, ինչպէս ղեւտականացն էր: Ուրեմն կատարեալ է գաղափարի միութիւնն այդ զոհին եւ հայ մատաղին միջեւ:

Կոնիբիր կը յարէ՝ թէ վրացի գրչագրաց մէջ ալ կան մատաղի օրհնութեան կանոններ (114): Իսկ ես պիտի յաւելում՝ թէ Լատինաց գառին ս. սեղանին վրայ օրհնուիլն ալ (աստ, 374) աւելի մօտ է մեր մատաղագոհին քան հին ագապին: Եկատելով սակայն Յունաց եւ Ասորոց հակառակութիւնը հայ մատաղին, կը ստիպուինք հետեւցնել՝ թէ միջին դարուն այլ եւս պաշտօնական չէր Յունաց վերոյիշեալ «զոհի» աղօթքը. այլ ղեռ ցրիւմնացած ի գործածութեան: Յամենայն ղէպս հաւանական չէ՝ որ հայ մատաղին արտաքին աղճատ ձեւերն ալ ունեցած լինին անոնք:

